Արձանագրություն N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«08» ապրիլի 2016թ. ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1.Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-03» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ բանակցություններ վարելու մասին.

«ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում կազմակերպված բանակցություններին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցը՝ «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, բանակցություններին չի ներկայացել:

2. Հանձնաժողովը որոշեց.

-«ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-03» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում):

-հաստատել «ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-03» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ին:

9-րդ, 11-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Յասոն» ՍՊԸ-ին:

9-րդ, 11-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. ապրիլի 14-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

3) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. ապրիլի 14-ը ներառյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ չափաբաժինների մասով չհիմնավորված ցածր գնային առաջարկներ ներկայացնելու համար. մասնակիցների ներկայացրած գները ցածր են գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 18-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Աղավնի Բուդուլյան

Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Էդգար Տոնականյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան